ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունվարի 2011 թվականի թիվ 5 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N 4-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի՝ <Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին> N ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով , Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 21-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ-176-Ն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով, «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1- ին մասի 1/ կետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման գործողությունը տարածվում է 2011 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

3.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010թ. հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009թ. հունվարի 8-ի N 1-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4-Ա որոշումը:

4.Որոշման կատարման ապահովումը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանի վրա:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. հունվարի 17
ք.Իջևան